



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material





✓ Ltn  
1981





17999



Մ. ՈՒԹԷՌ

ԲՆԹԵՅԻ ԵՇԻՍԲԻՄ



ԹԱՐԳՄԱՆԵԱՅ Ի ԳԱՂԱԻԵՐԵՆԵ


Ա. Ս. Տ.

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Յ. ՄԻԿԷԼՆՏԻՍԵԱՆ

= 1867 =





ՎՈՒԹԻՌ



ԲՆԹԱՅԻ ԱՇԽԱՐՀԻՍ

ՊԱՊՈՒԳԻՆ ՏԵՍԻԼԻԸ



0781

ԹԱՐԳՄԱՆԵԱՅ Ի ԳԱՂՆԻԲԵՆԵ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՂՏԱՆՈՒ ՄԻԻՏԻՆՏԻՍԵԱՆ

41981-60

SECRET

SECRET



41981-60

2B 1988



Սիրելի ընթերցող, մեծին Վոլթէռի այս փորձիկ, բաց իմաստալից՝ փիլիսոփայական վերջը թարգմանելուս նպատակը՝ Հայերիտաւարդութեան հաճելի՝ և միանգամայն օգտակար ըլլալն է :

Գրուածոյն գեղեցկութիւնը մի ըստ միուրէ գովելն՝ ինձ աւելորդ կը համարիմ : Գրքի մը ճակատին վրայ սոսկ « Վոլթէռ » անունը, կարծեմ թէ բաւականաչափ գովեստ մ'է, բայց ՚ի սոսկէ Հայկազն ընթերցողը ուշադիր մտօք կարդալով կրնայ ամէն գեղեցկութիւնքը նշմարել և հետեւաբար ալ գովել :

Որ և իցէ թերութիւն որ գրքոյկիս մէջ կը տեսնուի աւելի թարգմանչին քան թէ հեղինակին կը վերաբերի : Կ'աղաչեմ, ազնիւ ընթերցող, որպէս զի թարգմանչին բարեացը փափաքիս, ինչպէս որ անիկայ քու բարեացը փափաքելով զՎոլթէռն Հայախօս ՚իլլոս ընծայեց :





(1) ՊԱՊՈՒԳԻՆ ՏԵՍԻԼՔԸ

ԻՐՄԵ ԳՐԵԱԼ

Աշխարհիս տերութեանցը վերահացու գտնուող ոգիներուն մէջ, թողուռիէն առաջին կարգիններէն մէկուն կը տիրէ, բարձր Ասիոյ բաժինը իրենն է: Առտու մը, Օքսուսի ափանցը վրայ, Սկիւթացի Պապուգին բընակարանը իջաւ, ու ըսաւ իրեն, Պասպուգ, Պարսից յիմարութիւնքը և անկարգութիւնքը մեր բարկութիւնն շարժեցին, երէկ բարձր Ասիոյ ոգիք ժողովք մը կազմեցին Ռեոսեպոխար պատժել, կամ ալ կործանել վճռելու վախճանաւ: Այս քաղաքս գնա՛, ամէն բան քննէ՛, յետոյ գալով՝ հաւատարմութեամբ ամէն բանին համարը պիտի տան, և ըստ վկայութեանդ այս քաղաքս պատժել, կամ ալ հիմնայատակ կործանել պիտի որոշեմ: Բայց, տէր իմ, ըսաւ խոնարհաբար Պասպուգ, ամենեկին Պարսկաստան չեմ գացեր, հոն մարդ մը չեմ ճանչնար: Ալեքի աղէկ, ըսաւ հրեշտակը, կողմնակցութիւն չը պիտի բնեա, երկինք ընտրողութեան պարգևն չը

(1) ՊԱՊՈՒԳ. Յատուկ անուն մ'է:

նորհեց քեզ, ամէն մարդու բու վրայօքոք վստահութիւն ազդելու պարզեն ալ կը յաւելում, գնան, նայէ, խմացիր, քննէ, ու բանէ մը մի վախեր, ամէն կողմ աղէկ ընդունելութիւն պիտի գտնես :

Պապուգ ուղտին վրայ հեծաւ, ու իւր ծառայիցը հետ ճամբայ ելաւ : Քանի մը օրէն, Սենաարայ դաշտերուն մէջ, Պարսկական բանակը գիմաւորեց որ Հնդկական բանակին հետ պիտի մարանչէր : Նախ և առաջ բանակէն անջատեալ զինուորի մը մօտենալով պատերազմին պատճառն հարցուց : Յանուն համօրէն աստուածոց, ըսաւ զինուորը, ես իսկ չեմ գիտեր, ասիկայ իմ գիտնալու բանս չէ, իմ արհեստս ապրուստս ճարելու համար մեռցրնել ու մեռնիլն է, որ և իցէ տիրոջ ծառայելը հոգս չէ : Գուցէ վաղուքնէ Հնդկաց բանակը կ'անցնիմ, որովհետեւ կ'ըսեն թէ ամէն օր իրենց զինուորներուն գրեթէ պղնձէ կէս դրամաւելի կուտան, զորն որ մենք Պարսկաստանի անիծեալ ծառայութեան մէջ չ'ունինք : Եթէ պատերազմս պատճառն իմանալ կը փափաքիս, զօրապետիս հետ խօսէ :

Պապուգ զինուորին փոքրիկ ընծայ մը տալով բանակը մտաւ : Շուտով մը զօրապետին հետ ծանօթութիւն ընելով պատերազմին պատճառն հարցուց : Ի՞նչպէս կ'ուզես որ գիտնամ, ըսաւ զօրապետը, և թէ անոր պատճառը գիտնայն ինձ ի՞նչ կը վերաբերի : Ի՞նչ սէպօլտէն երկու հարիւր մզնն հեռու կը բը-



նակիմ, պատերազմին հրատարակիլը հաղիւ  
թէ կը լսեմ, փութապէս կը ձգեմ ընտանիքս,  
և ըստ սովորութեանս, բաղըն կամ մահն կը  
փնտռեմ, որովհետև այլ գործ չ'ունիմ: Բայց  
քու ընկերակիցքդ, ըսաւ Պապուգ, քեզմէ  
աւելի տեղեկութիւն մը չ'ունի՞ն այս նիւթիս  
վրայօք: Այ, ըսաւ զօրապետը, սոսկ մեր գըւ-  
խաւոր նախարարքը այս սպանութեանց պատ-  
ճառը տեղն 'ի տեղը գիտեն:

Պապուգ զարմացմամբ սպարապետաց քո-  
վքն եկաւ, անոնց հետ ընտանացաւ: Վեր-  
ջապէս անոնցմէ մէկը ըսաւ իրեն, այս պա-  
տերազմիս պատճառը, որ քսան տարիէ 'ի վեր  
զՆ'օրս կ'աւերէ՝ ի սկզբան Պարսկաստանի մեծ  
թագաւորին կնկանը Ներքինիին ու Հնդկաց  
մեծ թագաւորին դիւանին մէկ գործակալին  
մէջ ծագած վէճէ մը յառաջ եկաւ: Խնդիրը  
այնպիսի իրաւանց վրայ էր, որ գրեթէ Դա-  
բեհեան դրամի մը երեսներորդ մասին կու-  
գար: Հնդկաց առաջին պաշտօնեայն ու մե-  
րը իրենց տիրոջը իրաւունքը արժանապէս  
պաշտպանեցին, վէճը բորբոքեցաւ, երկու  
կողմանէ միլիոն մը զինուորէ բաղկացեալ բա-  
նակ մը 'ի դաշտ արձրկեցին: Իւրաքանչիւր  
տարի չորս հարիւր հազար մարդէ աւելի այս  
բանակիս աւելցնել հարկ է: Սպանութիւնք,  
հրդեհք, աւերածք, աւարառութիւնք օր  
ըստ օրէ կ'աւելնան, տիեզերք կը կրէ, ու  
կատաղութիւնն կը տուէ: Սեր և Հնդկաց ա-  
ռաջին պաշտօնեայն անդադար կը փողոքեն

Թէ մարդկային ազգին երջանկու թէր համար կ'աշխատին, և իւրաքանչիւր բողբոքման, միշտ քանի մը քաղաք կը կործանի, ու քանի մը դաւառ կ'ապականի:

Երկրորդ օրը, իմանալով թէ խաղաղու թիւն հաստատուելու վրայ է, Պարսիկ և Հնդկի ստորապետք՝ պատերազմ մըն ալ ընել աճապարեցին, բայց տրիւնալից եղաւ Վապուդ ասոր բոլոր վրիտանքը ու գարշելի ընթացքը տեսաւ, գլխաւոր նախարարաց գործոցը ահանատես եղաւ, որոնք ամենայն կերպով աշխատեցան իրենց գլուխը պատերազմի գրգռել, իրենց յատուկ գնդերէն սպաննուած զօրապետներ տեսաւ, քանի մը կտոր արիւնալից, պատառեալ ու ցեխապտտ կապերու ձեռք ձգելու համար, իրենց հոգեվարք ընկերակից քր խողխողելու զբաղեալ զինուորներ տեսաւ, հիւանդանոցներու մէջ մըտաւ ուր որ վիրաւորեալքը կը փոխադրէին, որոց մեծ մասը, հիւանդներու օգնելու համար դրուած ու Պարսից թագաւորէն առաստի վարձք ընդունողաց անողորմ՝ անհոգութենէ՝ հոգինին կը փշէին: Ասոնք մարդ են, աղաղակեց Վապուդ, չէ նե գողանք վայրենիք: Ահալաւ կը նշմարեմ թէ Քէոսէպօլիս պիտի կործանի:

Այս մտածմունքովս զբաղեալ, Հնդկաց բանակն անցաւ, Պարսից բանակին պէս աւնոնցմէ ալ աղէկ ընդունելու թիւն գտաւ, ինչպէս որ յառաջագոյն իրեն զուրյուած էր:



բայց հոն ալ միւսնոյն անկարգութիւնքը տեսաւ որ իրեն այնչափ արհաւիրք պատճառած էին : Մհ, սհ, ըսաւ ինքնիրեն, եթէ թողու ռիւլ հրեշտակը զՊարտիկս բնաջնջ բնել կ'ուզէ, պետք է ուրեմն որ Հնդկաց հրեշտակն ալ զՀնդիկս ջնջէ : Յետոյ երկու բանակին մէջ անցած իրաց տեղն 'ի տեղը տեղեկացաւ, առատածեւնութեան, մեծանձնութեան, մարգասիրութեան գործքեր լսելով զարմացաւ և ապշեցաւ : Ընմեկնելիզ անգ մարդկան, գոչեց, ինչպէս կրնաս այսչափ գծծութիւն վսեմութեան հետ և այսչափ առաքինութիւնք մոլութեանց հետ միացնել :

Այսու ամենայնիւ խաղաղութիւնք հրրատարակուեցաւ : Արիւ բանակին գլխաւորքը, որոց և ոչ մէկը յաղթական հանդիսացած էր, բայց եթէ, իրենց անձնական շահին համար, իրենց նման այնչափ մարդկանց տրիւնք թափել տուած էին, արքունեաց մէջ վարձատրութեանց հետամուտ ըլլալ գացին : Խաղաղութիւնք հասարակաց գրուածոց մէջ հաշակուեցաւ, որ երկրիս վրայ առաքինութեան և երջանկութեան վերադառնալը կը ծանուցանէին : Օրհնեալ ըլլայ Աստուած, ըսաւ Պապուգ, Բէռսէպօլիս սրբազան անմեղութեան բնակարանը պիտի ըլլայ, ամենեւին չի պիտի կործանի, ինչպէս որ այնչարանենդ ոգիք կը բաղձային, առանց մամնակ կորսնցնելու : Ասիոց այս մայրաքաղաքս մտնել փութանք :

Հին մուտքէ մը այս լայնածաւալ քաղաքս հասաւ, որ կոպիտ շինուածք մ'ունէր, և թէ անասորժ բրտութիւն մը մարդուս աչքին կը զարնէր: Վաղքին բոլոր այս մասը իւր առջի շինութիւնը անփոփոխ պահած ըլլալը յայտնապէս կը ցուցնէր, որովհետև մարդկան հինն գտլելով ու նորն վար զարնելուն յամառութեանը դէմ խոստովանիլ կը պարտաւորիմք թէ որ և իցէ նիւթի մէջ առաջին փորձերը միշտ կոպտագոյն եղած են:

Պապուդ՝ երկու սեռի յամենազաղիւր և յամենատղեղ անձանց բաղկացեալ ժողովրդեան խառնիճազանձ խմբին մէջ խառնուեցաւ, բազմութիւնը ապշած դէմքով որմնապատ ընդարձակ ու խաւարին տեղի մը մէջ արտօրնօք կը ձեպէր: Անրնդհատ շունջը լքելով դըրդիւնը և ոմանց՝ նստելու իրաւունքը ունենալու համար սյւրց տուած ստակը տեսնելով, ինքզինքը յարդէ աթոռներու վաճառանոցի մը մէջ կարծեց, բայց յետոյ տեսնելով թէ բազմութիւ կանայք ծունկ կը չոզին, առջևնին նայիլ կեղծելով, և որ կոմնակի մարդիկներուն կը նայէին, տաճարի մը մէջ ըլլալն հասկցաւ: Կծու, հեղձուցեալ, վայրենի, անմիաբան ձայներ անյօդ հնչումներով կամարը կը թնդացնէին, և թէ մարդուս վրայ միևնոյն ազդեցութիւնն կ'ընէին, ինչպէս որ վայրի իշոց ձայնը, Ռիգթավեան դաշտերուն մէջ, զերենք կանչող փողին կը պատասխանէ: Ականջները գոցեց, բայց աչուրներն ու քիթն



ալ դեռ ևս գոցել ստիպուեցաւ, երբ տեսաւ  
 թէ ունեւելօք և թիօք գործաւորք տաճարիս  
 մէջ մտան : | այնատարած քար մը դըրգելով՝  
 ժանտահոտ հողն յաջ և յահեակ ցրուեցին,  
 յետոյ այս փոսիս մէջ մեռեալ մը դնելով՝ քա-  
 րըն ալ վրան գլորեցին : | Ինչ, պուաց Պա-  
 պուգ, ժողովուրդքս նոյն ինքն աստուածուիւր  
 պաշտած տեղւոյն մէջ, իրենց մեռեալքն ալ  
 կը թաղեն . | Ինչ, իրենց պատճառքը դիւրով  
 կը յատակեն : | Ալ չեմ զարմանար այն ժան-  
 տաբեր հիւանդութեանց վրայ, որ շատ ան-  
 գամ Բէռսէպօլիսն յաւերակ կը դարձնեն,  
 մեռելոց, և այնչափ կենդանեաց ապականու-  
 թիւնը, որոնք միւսնոյն տեղ ժողուած ու ճըն-  
 շուած են, հողագունտս անգամ կարողագոյն  
 է յապականութիւն դարձնել : | Ինչ ան-  
 ճուսնի քաղաքէ Բէռսէպօլիս . յայտնի է թէ  
 հրեշտակք զայն կործանել կ'ուզեն, տեղն ա-  
 ւելի գեղեցիկ մը շինելու, և զայն մաքրա-  
 գոյն բնակչօք զարգարելու համար, որոնք  
 լաւագոյն եղանակաւ երգեն : | Նախախնա-  
 մութիւնն ալ իւր պատճառքը կրնայ ունե-  
 նալ, ձգենք որ ուղածին պէս գործէ :

Այսու ամենայնիւ արեգակը իւր ընթա-  
 ցից բարձրութենէն կը խոնարհէր : Պէտք էր  
 որ Պապուգ քաղաքին միւս ծայրը երթար  
 սիկնոջ մը առն, որու համար իր էրիկը որ  
 բանակին զօրապետն էր նամակներ յանձնած  
 էր : Նախ և առաջ Բէռսէպօլոյ մէջ բազ-  
 մաթիւ շրջաններ ըրու, լաւագոյն կերպով

զարդարեալ տաճարներ տեսաւ , բարեբարոց  
 ժողովրդեամբ լի , որ երաժշտականաց քաղց-  
 բանուագ երգերը կը հնչէին , հասարակաց  
 ազգիւններ տեսաւ , որոնք թէպէտև անպա-  
 տեհ եղանակաւ տեղաւորեալ , այսու ամե-  
 նայնիւ իրենց գեղեցիութեամբը մարդուս  
 աչքերը կը շայնէին , հրապարակք ուր որ  
 կարճես թէ Պարսկաստան կառավարող ամե-  
 նապաւ թագաւորքը իրենց պղնձեաց արձան-  
 ներովը գեռ կ'ապրէին , այլ հրապարակք ուր  
 ժողովուրդը , լսեց թէ , կ'աղաղակէր . երբ  
 պիտի տեսնենք հաս այն իշխանը , զոր կը սի-  
 բեմք : Օգարմոցմամբ գիտեց գետին վրայ  
 բարձրացեալ հրաշալի կամուրջքը , հցակապ  
 և ընդարձակ գետեղերեաց ճանապարհքը ,  
 յաջ և յահեակ կառուցեալ ապարանքք , այն  
 մեծականաց շէնքը ուր հաղաբաւոր վերա-  
 ւորեալ և յաղթական ծերունի զինուորք հա-  
 նապազօր զինուց աստուծոյն գոհութիւն կը  
 մատուցանէին : Վերջապէս տիկնոջ տունն  
 հասաւ , որ զինքը , բարեբարոց անձանց ըն-  
 կերութենէ մը շրջապատեալ , կերակուրի կրու-  
 պատէր : Տունը մաքրափայլ ու զարդարուն  
 էր , կերակուրը անուշահամ , տիկինը թե-  
 րահասակ , գեղեցիկ , հանձարեղ , հրապու-  
 ժիչ , ընկերութիւնն իրեն արժանավայել ,  
 Պապուգ ամեն վայրկեան ինքնիրեն կը գրու-  
 ցէր . թղուսիւ հրեշտակը աշխարհքս ծաղը  
 մընէ , այսպիսի սիրուն քաղաք մը կործանել  
 ուզելով :



Մակայն՝ տեսաւ թէ, այս արիկինս սր իւր  
 էրկանը վրայօք խանդաղատանօք տեղեկու-  
 թիւններ հարցնել սկսած էր, կերակուրին  
 վերջերը երիտասարդ մուրի մը հետ աւելի ևս  
 ջերմագոյն խանդաղատանօք կը խօսակցէր, ա-  
 տենակալ մը տեսաւ որ, իւր կնիկանը առջև,  
 մեծ եռանդեամբ որբեարի մը իր բազկացը  
 մէջ կը սեղմէր, ու այս առատածեռն որբեա-  
 րին մէկ ձեռքը ատենակալին վիզը անցու-  
 ցած, մինչդեռ միւսը գեղեցկատեսիլ ու վա-  
 յելադարդ երիտասարդ քաղաքացւոյ մը եր-  
 կընցուցած էր: Նախ սեղանէն ատենակալին  
 կինը ելաւ, մերձեկայ խուցի մը մէջ իր վար-  
 չին հետ խօսակցելու համար որ խիստ ուշ հա-  
 սած էր, և թէ զինքն կերակուրի սպասած է-  
 ին. վարիչք պերճախօս մարդ մ'ըլլալով, այն-  
 պիտի ազդու կերպով և եռանդեամբ խօսե-  
 ցաւ այն խուցին մէջ որ արիկինը, երբ դուրս  
 ելաւ, աչքերն խոնաւ, այսերը բորբորեալ,  
 քայլերն անհաստատ, խօսքերն դողդոջուն  
 էին:

Ըն ատեն Պապուգ սկսաւ վախնալ, որ-  
 պէս զի թիւռուիէլ ոգին չ'ըլլայ թէ իրաւունք  
 ունենայ: Ըմէնուն վտահաւթիւնը յինքն  
 ձգելու յատկութիւնն միւսնայն օրուան մէջ  
 տիկնոջ դաղտնեացը հաղորդ ըրաւ զինքը,  
 առ երիտասարդ մոգն ունեցած յօժարու-  
 թիւնն յայտնեց, ու զինքը ապահովուց թէ  
 Բէռսէպօլսոյ ամէն տուներուն մէջ իրեն տա-  
 նը մէջ տեսածին համապատասխանիչն պիտի

տեսնէ : Պապուգ հետեցուց թէ այսօրինակ  
ընկերու թիւն մը չի կրնար տեսել, և թէ նա-  
խանձը, գժտու թիւնը, վրէժխնդրու թիւնը  
ամէն տուններն պիտի աւերեն, արտասուք  
և արիւն ամէն օր պիտի վազեն, և թէ ճըշ-  
մարտիւ արք իրենց կանանցը տարփածուն  
պիտի սպաննեն, կամ ալ անոնցմէ պիտի  
սպաննուին, մէկ խօսքով թիւու իւր խիստ  
ազէկ կը գործէ անընդհատ անկարգու-  
թեանց մէջ ընկղմած քաղաք մը յանկարծակի  
կործանելով :

Այս տխուր մտածմանց մէջ ընկղմած էր,  
երբ դրան առջև ծանրատեսիլ մարդ մը տես-  
նուեցաւ, վրան սև վերարկու առած, որ խո-  
նարհաբար երիտասարդ ատենակալին հետ  
խօսիլ խնդրեց : Ասիկայ առանց ոտք ելլելու,  
ամբարտաւանութեամբ և անմտադիր դիմօք  
քանի մը կտոր թուղթ տուաւ իրեն և արձա-  
կեց : Պապուգ այս մարդուս ով ըլլալն հար-  
ցուց : Տան տիկինը կամաց ձայնով ըսաւ ի-  
րեն, քաղաքիս լաւագոյն փաստաբաններէն  
մէկն է, յիտուն տարի է որ յուսումն օրի-  
նաց կը պարապի : Պարոնը, որ հազիւ քանը-  
հինգ տարուան է, և թէ երկու օրէ 'ի վեր օ-  
րինաց դատաւոր է, դատի մը համառօտու-  
թիւնն ընելը այս մարդուս կը յանձնէ, զոր  
վաղը պիտի դատէ, և դեռ ևս քննած չէ :  
Ապուշ երիտասարդս իմաստութեամբ կը գոր-  
ծէ, ըսաւ Պապուգ, ծերունւոյն խորհուրդ  
հարցնելուն, քայց ինչո՞ւ համար այս ծերու-



նին դատաւոր չէ : Արխաբուխ , ըսին իրեն , աշխատալից և երկրորդական պաշտօնից մէջ ծերացողք ոչ երբէք պատուոյ կը հասնին : Այս երիտասարդը մեծ պաշտօն մ'ունի , ու բովհեաւ իւր հայրը հարուստ է , և թէ հոս դատաստան կտրելու իրաւունքը ագարակի մը պէս կը գնեն : Այլ սովորութիւնք , սով թըշուառ քաղաք , գոչեց Պապուգ , ահաւասիկ անկարգութեանց վերջի ծայրը , անտարակոյս այսպիսի եղանակաւ դատելու իրաւունքը գնողք՝ իրենց դատաստանն ալ կը ծախեն . հոս այլ ինչ չ'եմ տեսներ՝ բայց եթէ անդուդնք անօրէնութեանց :

Աինչդեռ այս կերպով իւր ցաւն ու զարմանքը կը յայտնէր , երիտասարդ զինուոր մը , որ միևնոյն օրը քանակէն եկած էր ըսաւ իւրեն . ի՛նչ պատճառաւ չե՞ս ուզեր որ դատաւորութեան պաշտօնը գնեն , ես ինքնին հըրամանատարութեանս ներքեւ գտնուող երկու հազար հոգւոյ գլուխ անցած մահու հետ դիմագրաւ ըլլալու իրաւունքն գնած եմ , ասիկայ ինձ քառասուն հազար Վարեհեան ոսկիի չափ արժէք ունեցաւ այս տարի , շիկագոյն զգեստով երեսուն գիշեր հետզհետէ երկրի վրայ պառկելով հանդերձ , և յետոյ նետի երկու ահաւոր հարուած ընդունեցայ , որոց վնասը դեռ ևս կը կրեմ : Աթէ ես բոլորովին կը կործանիմ Պարսիկ արքային ծառայելու համար , զոր երբէք չ'եմ տեսած , պարոն նախարարն ալ դատ կրելու հաճու-

Թիւն ձեռք բերելու համար հետևաբար քիչ մը բան կրնայ վճարել : Պապուգ զայրացած չկրցաւ իւր սրտին մէջ չդատապարտել այն պիտի երկիր մը ուր խաղաղութեան և պատերազմի պաշտօններն յաճուրդ կը հանեն, շուտով հետեցուց թէ պատերազմի և օրինաց ինչ ըլլանուն բնաւ տեղեկութիւն չունին, եթէ նոյն ինքն թիւում ինչ այս ժողովուրդքս չի ջնջէ, իրենց անգօսներն տեսնուած թիւնը իրենց կործանման պատճառ պիտի ըլլայ :

Իւր գէշ համարումը աւելցաւ, երբ աւսաւ թէ յաղթանդամ մարդ մը գալով, ամբողջ ահուճքը խիստ ընտանի կերպով բարեւեց, երիտասարդ զօրապետին մօտեցաւ, ու ըստ իրեն : Յիսուն հազար Բարեհեան ստիկ աւելի չեմ կրնար փոխ տալ բեզ, ուրովհետեւ, ճշմարտաբար խօսելով, տերութեանը մօտերը այս տարի երեք հարիւր հազարէն աւելի չբերին : Պապուգ՝ այս մարդուսով ըլլալուն վրայ տեղեկացաւ, որ քիչ վաստակելուն համար կը գանգաւոր, իմացաւ թէ Իտալիայօրայ մէջ քառասուն ուամիկ թագաւորը կան, որ Պարսկաստանի տերութիւնը վարձու կ'առնուն, ու մէջէն բաժին մ'աւարբային կը հանեն :

Կերակուրէն ետքը քաղքին հոյակապաւ ձարներէն մէկը գնաց, արանց և կանանց խրճէին մէջ բաղմեցաւ, որ ժամանակ անցընելու համար հսն եկած էին : Մտք մը բարձր տեղ



մը ելլելով, երկայն ժամանակ մտըւթեան և առաքինութեան վրայ խօսեցաւ : Այս մագս՝ ՚ի բազում մասունս բաժնեց այն որ բաժանման կարօտ չ'էր, այնպիսի բաներ քարոզեց՝ զորս արդէն գիտէին, ցուրտ կերպով սկսաւ, և լի քրտամբ և սպառեալ շնչով վերջացուց : Բոլոր ժողովուրդը այն ասէն արթնցաւ և կրթութեան մը ներկայ ըլլալն իմացաւ : Պապուգ ըսաւ : Ահաւասիկ մարդ, մը որ իւր քաղաքակցած երկու կամ երեք հարիւրը ձանձրացնելու համար բոլոր ճիգն ՚ի գործ դրաւ, բայց դիտաւ որ ութիւնը բարի էր, հոս Բեռսէպօլիսը կործանելու պատճառ մը չ'եմ տեսներ :

1870. Այս ակմբէս ելլելուն, ղինքն հասարակաց տօնի մը հանգիստտես ըլլալու տարին, որ տարւոյն ամէն օրը կ'ըլլար, տեսակ մը ապարանաց մէջ որու ծայրը պալատ մը կը տեսնուէր : Բեռսէպօլսոյ ամենաշքեղ տիկնայք, գլխաւոր նախարարք, կարգաւ շարուած, այնպիսի գեղեցիկ տեսարան կը կազմէին, որ Պապուգ նախ և առաջ կարծեց թէ բոլոր հանդէսն այն տեսածն էր : Արկու երեք անձինք որ թագաւորի ու թագուհւոյ կը նմանէին, չուտով այս պալատիս մտիցը վրայ տեսնուեցան, իրենց լեզուն ժողովրդեան լեզուէն բոլորովին տարբեր էր, չափաւորեալ, քաղցրահնչիւն ու վսեմ : Աչ ոք կը ննջէր, այլ խոր լուսթիւն պահելով ունկնդիր կ'ըլլային, լուսթիւնը ժողովրդեան փափուկ զգացմանց

ու զարմայմանց ցոյցերն սոսկ կ'ընդմիջէր, թագաւորաց պարտքը, առաքինութեան սէրը, կրից փեսաները, այնպիսի կենդանի և շարժիչ ձևերով կը ներկայացնէին որ, Պապուգ արտասուք թափեց, այս դիւցազունքը և դիւցազնութիւնքը, այս թագաւորքը և թագութիւնքը որոնց խօսուածքը լսելով տէրութեան քարոզիչք ըլլանուն վրայ չի տարակուսեցաւ, նոյն իսկ միտքը դրաւ թիւրուռիելի երթալ և զասոնք լսել հրաւիրել, ապահով ըլլալով թէ այսպիսի տեսարան մը զինքն քաղքիս հետ բողբոլին պիտի հաշտեցնէ :

Հազիւ թէ այս հանդէսը կատարուեցաւ, գլխաւոր թագութիւն տեսնել ուղեց, որ այս պալատին մէջ գեր ազնիւ ու մաքուր բարոյական մը քարոզած էր. իւր մեծափառութեան քով տարուեցաւ. զինքն փոքրիկ սանդուխտ մը երկրորդ հարկին վրայ՝ ողորմելի կերպով զարդարեալ սենեակ մը տարին, ուր ողորմելի զգեստներ հագած կին մը տեսաւ, որ ազնուական և ազգու կերպով մը ըսաւ իւրեն. այս արհեստս ինձ ապրուստ չի ճարեր, տեսած իշխաններէդ մէկը ինձ որդի մը բերելու պատճառ եղաւ, քիչ ատենէն պիտի ծնանի, սոսկի կարօտուի ունիմ, և առանց ստակի տղայ բերել չ'ըլլար : Պապուգ հարիւր Իարեհեան ոսկի տուաւ իրեն, ըսելով. եթէ քաղքիս մէջ սոսկ այս չարիքս կայ, թիւրուռիել այնչափ բարկանալու իրաւունք չ'ունի :

(Նիկէ՝ անօգուտ և շքեղ զարդուց վաճառ



աւականի խանութ մը երթալ ուղեց, իրիկ  
 սւան ժամանակը հոն անցընելու համար: Հան-  
 ձարեղ մարդ մը, որու հետ ծանօթութիւն  
 ըրած էր, զինքն հոն տարաւ, իրեն հաճելի  
 երեցածը գնեց, որ քաղաքավարական կերպով  
 արժածէն շատ աւելի սուղ ծախեցին: Մինչ  
 տուն եկաւ, քարեկամը որչափ խաբուած ըլ-  
 լան յայտնեց իրեն: Պապուգ յիշատակաց  
 ցանկին մէջ վաճառականին անունը նշանա-  
 կեց, քաղբին պատուհասելուն օրը մասնա-  
 ւոր կերպով թագուռիելին ցոյց տալու հա-  
 մար: Մինչդեռ կը գրէր, դուռը զարկին  
 միւննոյն վաճառականն էր, որ Պապուգին քը-  
 տակը բերաւ, որովհետեւ անպուշութեամբ  
 հաշուեակցանին վրայ ձգած էր: Ի՞նչպէս կըր-  
 նայ ըլլալ, ըսաւ Պապուգ, դու որ առանց  
 ամէնալու սնտափ զարդերն արժածէն չորիցս  
 անգամ աւելի սուղ ծախեցիր, այսօրինակ  
 հաւատարիմ և առասպաձեռն ըլլաս: Չկայ  
 ծանօթ վաճառական մը բոլոր քաղաքիս մէջ,  
 պատասխանեց անիկոյ, որ քսակդ քեզ չի բե-  
 րէ, բայց խաբած են զքեզ՝ ըսելով թէ ինձ  
 մէ գնածդ արժածէն չորս անգամ վեր է,  
 տասնիցս անգամ աւելի սուղ ծախեցի, և  
 թէ ըսածիս ճշմարտութիւնը փորձելու հա-  
 մար, եթէ ամսուան մը մէջ գայն վերստին  
 ծախել փափաքիս, այս տասներորդս իսկ  
 ձեռք չ'ես կրնար բերել: Բայց այս ալ արդա-  
 քացի է, մարդկան մտացածին յօժարութիւ-  
 նքն ու կամքն է որ այս սնտափ իրաց գին որո-

չեց, միևնոյն յօժարութիւնն գործիս մէջ  
գործածած հարիւր գործաւորքը կ'ապրեցը-  
նէ, նոյն ինքն է որ գեղեցիկ առն մը, շքեղ  
կառք մը, ձիեր ինձ կը շնորհէ, անիկայ է որ  
հնարագիտութիւնը կը յարուցանէ, ճաշակը կը  
սնուցանէ, և առատութեան շքանք կը պահէ :

Սերձաւոր ազգաց նոյն սնուիքը աւելի  
ևս սուղ կը ծախեմ, ու ասանկով տէրուէս օգ-  
տակարեմ : Պապուգ, քիչ մը մտածելէն վերջը,  
վաճառականին անունը իւր ցանկէն աւրեց :

Պապուգ՝ Իհուսէպօլտոյ վրայօք ինչ տե-  
սակ դատում ընելուն վրայ անտայդ, մօգե-  
րն ու դրադէտքը տեսնել մտածեց, որով  
հետև սմանք կրօնք և այլք իմաստութիւն  
կ'ուսանէին, ուրախացաւ թէ ասնք ժողո-  
ւորեան մնացորդ մասին համար թողութիւն  
պիտի ընդունին : Երկրորդ առաւօտ անյա-  
պաղ մօգերու դպրոցն եկաւ : Վանահայրը  
խոստովանեցաւ թէ ազքատութեան ուխտը  
նելուն համար հարիւր հազար սիուդ եկա-  
մուտ ունի, ու խոնարհութեան ուխտին ղօ-  
րութեամբը, բաւական ընդարձակ իշխանու-  
թիւն կը վարէ, յետոյ զՊապուգ պղծիկ եղ-  
բօր մը յանձնեց, որ շատ պատիւ բրաւ իրեն :

Մինչդեռ եղբայրը այս ապաշխարութեան  
տանը շքեղ սքանչելիքը իրեն կը ցուցնէր,  
ձայն ելաւ թէ վանքերն վերանորոգելու ե-  
կած է : Իսկ և իսկ իւրաքանչիւր վանքէն յի-  
շատակադիրներ ընդունեցաւ, որոնց նիւթն  
սյս էր, « պահպանէ զմեզ ու միւս ամէնքն



ալ կործանէ » այս ընկերու թեանս վերաբեր-  
 եալ շատ մը ջատադուլութիւններ լսեց, նաև  
 փոփոխակի ամբաստանութիւններ ալ լսելով՝  
 ամենքն ալ ոչնչանալու արժանի սեպեց : Օչար-  
 մացաւ երբ տեսաւ թէ անոնցմէ և ոչ մէկը  
 տիեզերս բարեկարգելու համար, չուզէ  
 իշխանութիւն ձեռք չի ձգել : Այն ատեն  
 պղտիկ մարդ մը ներկայացաւ, որ կիսամոգ-  
 մ'էր ու ըսաւ իրեն, լաւ կը նշմարեմ թէ  
 դործը պիտի կատարուի, որովհետև Օ՛հո-  
 տիւսդ յերկիր իջաւ, պղտիկ դստերք կը  
 մարգարէանան, առջևնուն ունելեաց հար-  
 ուածներ ու ետևնուն ալ խարաղան ընդունե-  
 լով : Այս ուրեմն պաշտպանութիւնդ կը  
 խնդրեմք մեծ քրմապետին դէմ : Ի՞նչպէս,  
 ըսաւ Պապուդ, այն քահանայապետ թագա-  
 ւորին դէմ որ Վիպէդ կը նստի : Այն ինքն  
 իրեն դէմ : Սիթի իրեն դէմ կը պատերազ-  
 միք, ու իրեն դէմ բանակներ կը յարուցա-  
 նէք : Ա՛չ, բայց ինքը կ'ըսէ թէ մարդս ազատ  
 է, մենք ասոր չ'ենք հաւատար, իրեն դէմ  
 գրքոյկներ կը հրատարակենք, բայց չկարգար  
 զանոնք, հազիւ մեր վրայ խօսուիլն լսեց,  
 սոսկ զմեզ դատապարտել տուաւ, ինչպէս որ  
 տէր մը իւր պարտեղին ծառերէն թրթուրք  
 մաքրել կը հրամայէ : Պապուդ՝ զիմաստու-  
 թիւն դաւանողաց յիմարութիւնը, այս աչ  
 խարհքէս հրաժարուաց, բանսարկութիւնքը,  
 խնարհութիւն և անչահասիրութիւն քարո-  
 զողաց փառասիրութիւնն ու հպարտ ցան-

կութիւնքը տեսնելով՝ սոսկաց, հետեւցուց  
ուրեմն թէ թողու ուիել խիստ շատ իրաւունք  
ունէր բոլոր այս ցեղս ջնջել ուղեւուն :

Տուն քաշուելով՝ տիրութիւնը սակաւ  
ինչ մեղմացնելու համար նորատիպ մատենայ  
փնտռել տուաւ, ու քանի մը գիտնականք  
զուարճանալու համար կերակուրի հրաւե-  
րեց : Ազգածէն երկու անգամ աւելի բազ-  
մաթիւ եկան, պիծակներու նման որ մեղրը  
իրեն կը քաշէ : Այս հացկատակք անդադար  
կ'ուտէին և կը խօսէին, երկու տեսակ ան-  
ձինքը կը գովէին, զմեռեալս և զիրենք, ոչ  
երբէք զժամանակակիցս, ՚ի բաց առեալ զտան-  
տէրն : Աթէ իրենցմէ մէկը աղէկ խօսք մը  
կ'ըսէր, միւսները այն խօսքը իրենք չ'ըսէ-  
նուն ցաւէն աչքերնին յերկիր կը խոնարհե-  
ցնէին ու շրթունքնին կը խածնէին : Իրենց  
կեղծաւորութիւնը մոգերէն նուազ էր, քան  
զի փառասիրութեան այնպիսի մեծ առար-  
կաներ չ'ունէին : Իւրաքանչիւրը սպասաւորի  
մը տեղն ու երեւելի մարդու համարումն սաս-  
տիկ եռանդեամբ կը խնդրէր, փոփոխակի  
դէմ առ դէմ նախատական բաներ կ'ըսէին,  
զորս իրենք իմաստալից խօսքեր կը համարե-  
ին : Պատուզի պատգամաւորութեան վրայօք  
քիչ մը տեղեկացած էին : Մէկ մը ցած ձայ-  
նով աղաչեց իրեն հեղինակ մը ջնջել որ հինգ  
տարի առաջ զինքն բաւականապէս գոված  
չ'էր, ուրիշ մը քաղաքացւոյ մը կորուստը  
խնդրեց, որ երբէք իւր կատակերգութեանցը



չէր ծիծաղած, երրորդ մը ճեմարանին խա-  
 փանու մը ուզեց, որովհետև ամենեւին չէր  
 կրցած հոն ընդունուիլ: Ընթրիքը լմնալով  
 իւրաքանչիւր որ առանձինն գնաց, որովհետև  
 չկար բոլոր խմբին մէջ երկու մարդ, որոնք  
 կարենան մէկզմէկ քաշել, և ոչ իսկ՝ զիրենք  
 սեղանի հրաւիրող հարուստներու անէն  
 'ի զստ՝ այլ տեղ կրնային մէկզմէկու հետ խո-  
 սակցիլ: Պապուգ այնպէս դատեց թէ ընդ-  
 հանուր կործանման մէջ այս խառնաձաղանձն  
 ալ կործանելը մեծ բան մը չէր:

Հազիւ թէ անոնց ձեռքէն ազատեցաւ,  
 քանի մը նորասիւս մտայեանք սխառեցիւրդու:  
 Ընոնց մէջ իւր հիւրերուն պէն՝ ճանչցաւ,  
 մեծ ցամամբ տեսաւ այն բամբասանաց լը-  
 բագիրքը, այն անձաշակ դիւանագիր մատ-  
 եանքը, նախանձէ, գձձու թենէ և 'ի քաղցու-  
 թելադրեալ, այն վատ երգիծարանու թիւերը  
 որ անգղը ձեռք առնելով զաղաւնին կը պատա-  
 ռեն, երևակայուէ յառաջ եկած այն իկատա-  
 նուիքը, ուր այնչափ կանանց նրկարագիրք կը  
 տեսնուին, զորս հեղինակին անգամ չճանչնար:

Բոլոր այս ատելի գրուածքն 'ի հուր նե-  
 տեց, իրիկուան զբօսանքի երթալու համար  
 դուրս ելաւ, զինքը ծերունի գրագէտի մը  
 ներկայացուցին որ պատառաբայօջից թիւն ա-  
 ճեցնելու չէր եկած: Գրագէտս միշտ բազ-  
 մու թենէ կը փախէր, զմարդիկ կը ճանչնար,  
 և ասոր օգուտն ալ կը քաղէր և ընտրողու-  
 թեամբ այլոց հետ կը տեսնուէր: Պապուգ

կարդացածին ու տեսածին վրայօք մեծ ցա-  
ւօք սրտի խօսեցաւ իրեն :

Յիրաւ ի անարգանաց արժանի բաներ կար-  
դացեր ես , ըսաւ իմաստուն գրագէտը , բայց  
որ և իցէ ատեն , որ և իցէ ազգի մէջ , չարն  
մըջնաց նման կ'եռայ կը դեռայ , բայց բարին  
դժուարագիւտ է : Իմաստակաց անպիտան մը-  
նացորդը տունդ բնգուններ ես , որովհետեւ ,  
որ և իցէ արհեստի մէջ միշտ և հանապազ ,  
լքու թեամբ ներկայացողն , անարգագոյնն է :  
Ղշգրիտ իմաստունք քաշուած և իրենց մէջ  
հանգարտ կ'ապրին . մեր մէջը մտադրութեա-  
նըդ արժանի մարդիկ ու մատեանք ալ կը գըտ-  
նուին : Այսպէս խօսած ատենը , այլ գրրա-  
գէտ մը քովերնին մօտեցաւ , խօսակցութիւ-  
նըն այնպիսի զուարճալի և կրթական , 'ի նա-  
խապաշարմանց այնպէս վեր և առաքինու-  
թեան համաձայն էր որ Պապուգ խոստովա-  
նեցաւ թէ ասոր նման բան երբէք չ'եր տե-  
սեր : Ահա այնպիսի մարդիկ , կ'ըսէր ինք-  
նիրեն , որոնց թղուռիէլ հրեշտակն գպչիլ  
անգամ չը սխտի համարձակի , ապա թէ ոչ  
պէտք է որ խիստ անգութ ըլլայ :

Վրագիտաց հետ հաշտուելով ազգին մը  
նացորդին դէմ դեռևս բարկութեամբ լի էր .  
Դու օտարական ես , ըսաւ իրեն իմաստուն  
մարդը , որու հետ կը խօսակցէր , չար սովու-  
րութիւնք խմբովին աչացդ առջև կը ներկա-  
յանան , և թէ շատ անգամ 'ի չար սովորու-  
թեանց յառաջ եկած բարին որ 'ի ծածուկ է ,



քու աչքերէդ կը խուսափի : Այն ատեն իմացաւ թէ գիտնականաց մէջ ալ նախանձու ախտէն ազատ մարդիկ, ու մոգաց մէջ ալ առաքինազարդ անձինք կը գտնուին : Աերջապէս հետեցուց թէ այս մեծ միաբանու թիւնք, որ մէկզմէ կու հետ կուուելլով՝ կարծես թէ հասարակաց կործանումն կը պատրաստէին, ըստ ինքեան օգտակար կարգեր են, մոգերու իւրաքանչիւր ընկերու թիւնք իր նախանձաւորացը սանձ մ'էր, եթէ այս նախանձաւորք այլ և այլ կարծեաց մէջ կը տարբերէին, աւմէնքն ալ միևնոյն բարոյականը կ'ուսուցանէին, և թէ օրին ալ հլու կեանս վարէին հանգոյն ուսուցչաց որ տան որդւոյն վրայ կը հըսկեն, մինչդեռ տանուտերն իրենց վրայ կը հսկէ : Բազմաց հետ խօսակից ըլլալով երկնալայել հոգիներ գտաւ մէջերնին : Այն ինքըն մեծ քրմապետին դէմ մաքառել ուզող յիմարներուն մէջ խիստ երևելի անձինք տեսաւ : Արկմտեցաւ ուրեմն թէ շինուածոց նըկատմամբ խորհածն կրնայ Բէռսէպէլոյ սովորութեանցն ալ յարմարցնել, որոնցմէ ումանք արգահատանաց արժանի տեսնուեցան, իսկ այլք զինքն զարմացմամբ զմայլեցուցին :

Բաւ իւր գիտնականին, լաւ կը նշմարեմ, թէ այս մոգք, զորս փնասաբեր կը համարէի, յիրաւի խիստ օգտաբեր են, ևս առաւել երբ իմաստուն կառավարութիւն մը իրենց անհրաժեշտ կարևորութիւնք կ'արգելլու : Բայց գոնէ խոստովանիս պիտի թէ ձեր

երիտասարդ ատենակալքը, որ հաղիւ ձի հեծնել կը սորվին, գատաւորական պաշտօն մը կը գնեն, ծաղրաշարժ ժպրհուլթիւն, և ամենաթիւր անօրէնութիւն կը սիւեն ատենից մէջ. շատ աւելի աղէկ էր այս պաշտօններս ձըրիաւ պէս այն ծերունի իրաւագիտաց շնորհել, ուրոնք բար կեանքերնին զմեան և զընդդէմն քննելով անցուցեր են :

Կրագէտն պատասխանեց. Բէռսեպօլիս գալէդ յառաջ մեր բանակը տեսար, երիտասարդ սպարապետքը, գիտես թէ, իրենց պաշտօնը գնած ըլլալով՝ խիստ մեծ քաջութեամբ կը պատերազմին. տակաւին պիտի տեսնես մեր երիտասարդ ատենակալքը դատելու իրաւունքը գնելովնին հանգերձ՝ գէշ գատաստան չ'են կարեր :

Արկարդ օրը զինքն բարձրագոյն ատեններ տարաւ, ուր մեծ դատ մը պիտի ըլլար : Ալթն ամենուն ծանօթ էր : Ամեն ծեր փատաբանք որ այս գործիս վրայ կը ճառէին՝ զանազան կարծեաց մէջ կը տատանէին, հազար ու մէկ օրէնք 'ի մէջ կ'ածէին, որոնց և ոչ մէկը բոտ հիման խնդրոյն մերձեցուցանելի էր, գործն հարիւր կողմանէ կը դիտէին, որոնց և ոչ մէկը ճշմարտագոյն և յայտնի էր. դատաւորք՝ փաստաբանից չկարծածէն աւելի արագութեամբ վճռեցին, վճիւն գրեթէ համամիտ գտաւ, քաջ դատեցին, որովհետեւ բանականութեան լուսոյն հետեւեցան, այլ իրենց կարծիքը լաւ չյայտնեցին, քանզի սոսկ



իրենց գրոցը խորհուրդ հարցուցին :

Պատուգ հետևութիւն հանեց թէ ստեղծար սովորութեանց մէջ ամենալաւ բաներ ալ կը գտնուին : Աոյն օրուքնէ սկսեալ իմացաւ թէ ունեւորաց հարստութիւնքը, որ իրեն այնչափ հակառակ երեցեր էին, կրնային ըստ քանչեղի արդիւնք մը յառաջ բերել, որովհետև արքայն ստրկի կարօտութիւն ունենալով, հասարակ միջոյններով վեց ամսուան մէջ չի գտնուիլքը՝ ասոնց ձեռք ժամուան մը մէջ գտաւ, այս երկրիս ցօղէն ուռուցեալ թանձր ամպերը, իրմէ ընդունածնին անձրևով աննոյն կը վերադարցնէին, Վարձեալ այս նոր ելուէ անձանց որդիքը, հին ընտանեաց իրենց որդւոցը տուած դատտխարակութենէ կատարելագոյն դատտխարակութիւ մ'ընդունելով, շատ անգամ օգտակարագոյն կը համարուէին, վասնզի հաշիւը գիտցող հայր մ'ունենալով՝ դիւրութեամբ կրնայ մարդս լաւ դատաւոր, քաջամարտիկ զինուոր, տէրութեան յաջողակ պաշտօնակալ մ'ըլլալ :

Անգգայի իմն եղանակաւ Պատուգ ընչաւէտին անյագութեանը կը ներէր, որն որ ըստ ինքեան ուրիշներէ աւելի անյագ չ'է, և թէ կարևոր անձ մ'է, ներողամիտ աչօք կը նայէր դատաստան կտրելու և պատերազմելու համար ինչքերնին կորսնցնողաց յիմարութեանը վրայ, այնպիսի յիմարութիւն որ մեծամեծ աւտենակալք և դիւցազունք յառաջ կը բերէ, գրագիտաց նախանձոյն թողութիւն կուտար,

որոնց մէջ զաշխարհ լուսաւորող անձինք կը  
 գանուէին, փառասէր և բանսարկու մտգաց  
 հետ կը հաշտուէր, որոնք փոքրիկ մտլու  
 թիւններէ աւելի մեծագոյն առաքինու թեանց  
 տէր էին. բայց սրտին մէջ դեռևս սի կար,  
 մանաւանդ կանանց փաղաքշանքը, և անկէ  
 յառաջ եկող թախծու թիւնք զինքն անհան-  
 գատու թեամբ և արհաւրօք կը լեցնէին:

Ինչպէս որ ամէն ազգի անձանց մէջ մուտ  
 գանել կ'ուզէր, պաշտօնէի մը տուն տարուե-  
 ջաւ, բայց ճամբան անդադար կը դողայր՝ որ  
 չ'ըլլայ թէ կին մը աչացը առջև երկրնէն ըս-  
 սրաննուի: Պաշտօնէին տունը հասած ըլլալով  
 նախասենեկին մէջ իւր գալստեան լուրը արը-  
 ուելէն՝ երկու ժամ յառաջ՝ երկու ժամ ալ  
 ետքն սպասեց: Այս միջոցիս միտքը դրաւ  
 պաշտօնեայն և իր լիրբ բարապանքը մանաւ-  
 լոր կերպով թողուելէլ հրեշտակին իմացնել:  
 Նախասենեկին մէջ ամէն աստիճանի տիկնայք  
 ամէն տեսակ մոգք, դատաւորք, վաճառա-  
 կանք, զօրապետք և իմաստակք լի էին, ա-  
 մէնքն ալ պաշտօնէին վրայօք մէկզմէկու կը  
 գանգատէին: Աքահն ու վաշխառուն կ'ըսէր:  
 Անտարակոյս այս մարդս տերու թէ գաւ առները  
 կը կողոպտէ, անձնակամն զինքն իբր անհեղեղ  
 կը կշտամբէր, հեշտասերն կ'ըսէր. Սոսկ իւր  
 հաճոյիցը կըզբազի, նենգամիտ բանսարկուն կը  
 պարծենար թէ քիչ ատենէն դաւաճանուք մը  
 անոր կորստեան հանդիսատես սլիտի ըլլայ. կա-  
 նայք կը յուսային թէ քիչ ժամանակէն իրենց



երխտասագագոյն պաշտօնեայ մը պիտի տրուի :

Պապուգ ասոնց խօսակցու թիւնները մտիկ կ'ընէր . ըսաւ ուրեմն : Մնա՛ այրն բարեբաստիկ , իւր թշնամիքը նախասենեկին մէջ են , նախանձորդը իւր իշխանութեամբը կը խորտակէ , զինքն անարգողքը ստիցը առջև կը տեսնէ : Վերջագէս ներս մտաւ , ամաց և գործոց ծանրութեան տակ խոնարհեալ բոց գեռևս առոց ու կորովբան պզտիկ ծերունի մը տեսաւ :

Պապուգէն հաճեցաւ , Պապուգն ալ զինքն յարգելի մարդու մը կարգ դրաւ : Օգտակար խօսակցութիւն մը իրենց մէջ հաստատուեցաւ : Պաշտօնեայն իր ամենագոյն անձ մ'ըլլալը խոստովանեցաւ , զինքն հարուստ կը համարէին , մինչդեռ աղքատ էր , զինքն ամենակարող կը կարծէին , մինչդեռ հանապաղ հակառակութիւն ու մերժում կը կրէր , ապերախտից աղէկութիւն ըրած էր . և թէ քառասնամեայ յարատե աշխատութեանց մէջ հազիւ վայրկենական միտթարութիւն մը զգացած էր : Պապուգ 'ի գութ շարժեցաւ , եթէ այս մարդս սխալմունք մը գործած է , և թողուռիւ հրեշտակը զինքն պատժել կ'ուզէ ըսաւ , առանց զինքն բողբոլին ջնջելու , միայն պաշտօնին մէջ ձգելն կը բաւէ :

Մինչ պաշտօնէին հետ կը խօսակցէր , գեղեցիկ տիկինը որու տուն կերակուր կերաւ Պապուգ՝ շտապաւ ներս մտաւ , աչացը մէջ ու ճակտին վրայ ցաւոց և բարկութեան յատարար նշանը կը նշմարուէր : Տերութեան

պաշտօնտեղալը դառնապէս կշտամբեց, արտա-  
սուք թափեց, իւր էրկանը, ծըննդեամբն՝  
դորձած ծառայութեամբքն և ընդունած վեր-  
քերովն, արժանացած պատիւ մը մերժելնուն  
համար ստատիկ գանգտեցաւ. այնպիսի ուժգ-  
նութեամբ խօսեցաւ, սղբոցը մէջ այնչափ վա-  
յելութիւնն սփռեց, ընդդիմադրութիւնքը  
այնպիսի յաջողակութիւն հերքեց, այնպիսի պեր-  
ճախօսութիւն պատճառաբանութիւնն յառաջ  
վարեց, որ էրկանը վիճակը առանց կատարելու-  
պէս ապահովցնելու սենեկէն դուրս չ'երաւ :

Պատուգ ձեռքն անոր երկնցուց, կարելի  
է արդեօք տիկին, ըսաւ, որ այնպիսի մար-  
դու մը համար զոր չես սիրեր այնչափ աշխա-  
տանք կրես, և թէ որմէ այնչափ երկնջելու  
ստիպուած ես : Վարդ մը զոր չ'եմ սիրէր,  
գոչեց տիկինն, գիացիր թէ աշխարհիս մէջ  
էրիկս լաւագոյն բարեկամն է, տարիածուէս  
ի՛ դատ, չկայ բան մը որ իրեն չզոհեմ, ինչպէս  
որ ինքն ալ բաց ՚ի իւր հարձը ձգելէ ամենայն  
ինչ ինձ համար պիտի ընէ : Քեզի հետ այնկինը  
ծանօթացնել կ'ուզեմ, շնորհազարգ, հանձա-  
րեղ, քաղցրաբարոյ կին մըն է. այս իրիկուն է-  
րիկս ու պզտիկ մոգս ՚ի միասին կերակուր պիտի  
ուտենք, եկուր մեր ուրախութե մասնակիցեղիք :

Տիկինը դ՛Պատուգ տունն տաբաւ : Լըրիկը  
որ տուն գարով ցաւոց մէջ ընկղմած էր, ար-  
տաքոյ կարգի ուրախութեան և երախտագի-  
տութեան ցոյցեր տալով իւր կինը դիմաւու-  
րեց, փոփոխակի իւր կնկանը, հարձին, սղբ-  
տիկ մոգին ու Պատուգի հետ կ'ընդգրկա-



խառնէր, Վիութիւն, ցնծութիւն, յօժարա-  
կամութիւն և շնորհալից ձեք ընթրեացս ու  
գին կը կաղմէին: Վիտցիք, ըսաւ իրեն գե-  
ղեցիկ տիկինը որու տունը կ'ընթրէր, անհա-  
մեստ ըսուող կանայք, ամենահամեստ մար-  
դու մը արժէքն ունին երբեմն, և թէ ասոր  
վրայօք համոզուելու համար, վաղը ինծի հետ  
գեղեցիկաշնորհ Վէսնին տունը կերակուր ուտե-  
լու եկուր: Քանի մը պառաւ աղջկունք զին-  
քը կը թշնամանեն, բայց անոնց ամէնուն  
'ի միասին գործածէն աւելի բարիք կ'ընէ ին-  
քը, ամենամեծ շահու համար անգամ թե-  
թեալոյն անարդարութիւն մը չգործէր,  
իւր տարփածուին մեծանձն խորհուրդներ  
կուտայ, սոսկ անոր փառացը համար կ'աչ-  
խատի. իւր հարձը տեսնելուն տարփածուին  
երեսը կարմրութիւն մը կը պատէ, եթէ բարիք  
ընելու առիթ մը փախցնէ, որովհետև մարդուս  
վարմանցը հարձ մը, որու յարգանացը և սի-  
րոյն արժանի ըլլալ կը փափաքուի, վկայ և դա-  
տաւոր ունենալէ 'ի զատ չկայ այլ միջոցոր առա-  
քինութե՛ գործոցը մէջ խըրախուսելու կարու-  
ղագոյն ըլլայ:

Պապուդ ժամագիր ատենին ներկայ  
գտնուեցաւ, այնպիսի տուն մը տեսաւ ուր  
հաճութիւնք կը տիրէին: Վէսն իրենց վրայ  
կը տիրէր, իւրաքանչիւրին իր լէզբան կը խօ-  
սէր. բնական հանճարն այլոց միտքն առ ինքն  
կը յանկուցանէր, գրեթէ առանց ուղեւու-  
հաճելի կ'ըլլար, որչափ որ սիրելի էր նոյնչափ ալ  
բարէսէր էր, և թէ ամէն բարի յատկութեցը

գինն աւելցնողն , իւր գեղեցկութիւնն էր :

Պապուգ որչափ որ Ալիւթացի ու որչափ ալ սգւոյ մը առաքեալն էր , յայտնի տեսաւ որ եթէ Ռէուսէպօլիս կենայ դեռ , Վէոնին պատճառաւ զԹդուռիէն պիտի մոռնայ : Քաղքին հետ սիրով կը կապուէր , որու ժողովուրդը բարեկիրթ , քաղցրաբարոյ ու բարետէր էր , թէպէտ և թեթև , չարախօս և ունայնասէր : Կը վախնաս որ չ'ըլլայ թէ Ռէուսէպօլիս դատապարտուի , նաև իր տալիք համարէն ալ կը վախեր :

Ահաւասիկ համարը այս կերպով տալ որու շեց . քաղքին մէկ ճարտիկ ձուլին ամէն մետաղներէ , հողերէ , պատուական և անարգ քարերէ կազմուած պղտիկ արձան մը շինել տալով Թդուռիէն տարաւ . կը գրգուէ՞ս , ըսաւ իրեն , այս գեղեցկաշէն արձանս , որովհետև ամբողջ ոսկիէ ու ադամանդէ չ'է : Թդուռիէլ ըսածին միտքն հասկցաւ , Ռէուսէպօլիսն ուղղել անգամ չ'սորհիլ և թէ աշխարհքո՞ իւր ընթացքին թողուլ որոշեց , քանզի , ըսաւ « եթէ ամենայն ինչ ամենաբարի չէ , գոնէ բաւականաչափ բարի է » : Աւրեմն ձրգեցին որ Ռէուսէպօլիս կենայ , ու Պապուգ աւսոր վրայօք ամենևին չգանգտեցաւ , ինչպէս որ Յովնան Աինուէի չհորժանելուն վրայ նեղացաւ : Բայց երբոր մարդս երեք օր կիտին փորին մէջ փափկեալ կը կենայ , կարծեմ թէ , թատրերգութեան , կատակերգութեան գալցող և սիրալիր ընկերութեան մէջ ընթրողին պէս զուարթաբարոյ չ'ըլլար :





(1) ՑԱՆԿ ԳՐՈՑ

	Արդի գրք.	Նախիկ գրք.
Տոսթ և Մարգրիտ . . . . .	1	5
Բարի իրիկուն Պ. Բանձարուն . . . . .	1	3
Սիհրգաս սղեբղուժիսն . . . . .	2	7
Բամեյա համբարեկեղանի գիշեր . . . . .	2	6
Պատուհանէն նեառուղ կէն մը . . . . .	2	6
Արդի . . . . .	1	5
Գիտութիւն մօրգիտին վարմանց . . . . .	4	13
Արիագտեմ սղեբղուժիւն . . . . .	2 1/2	5
Պետիկն գրքչիւր . . . . .	1	3
Էլիզա համ Արեւելեան պատերազմի		
Ճամբուկ . . . . .	10	20
Գանձարան հոգևոր . . . . .	5	10
Սոյիւն ի կատարիւրդ . . . . .	3	6
Սնն յերես համ Հայաս. բարերարը . . . . .	5	7 1/2
Բանգր կի մահութիւն . . . . .	6	12
Ի աղօղկն հիւանդութիւնը մաքրել . . . . .	3	23
Համօրիան սնն պէնարած հիբեայէսի . . . . .	6	10
Հաւարանց Հայկական ասոցումոց . . . . .	4	8
Քերական Գաղղկերէն և Տաճիկերէն . . . . .	2	5
Պանդուխտ համ կեանք Ազգանկուց . . . . .	3	6
Հայ սղջկանց կարգուելու գիւրկն		
Ճամբան . . . . .	2	3
Ի ավանդ իանի Պորտլիս վիճակը . . . . .	1	3
Օրացոյցը շատ տեսակներով . . . . .	1	1 1/2
Քերական, Հեգարան, Սաղմոս, Ժամայիրք, Նարեկ Գարծոց, Վշեհարան, Էն, Էն, Կանք ու իրնից վա- նակութեանց համեմատ կը վաճառուին:		

(1) Գրախնամանոցէս Բաժանորդաց համար պը-  
ռեւիք գրոց ցտկն է: Եւ երբ Էն նոսա Բաժանորդ և  
պարգասորին իրին լծարէլ:



